ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-24/30» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների (Սփյուռքի կրթօջախների համար դասագրքերի) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **24.01.2024թ**

Ժամը՝ 15:00

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան

Հանձնաժողովի անդամ՝ Ալվինա Էլոյան

Ամալյա Քոչարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Պայմանագրի կնքման գործընթացի մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՆՌԱՆԷ ԳՈՌ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 16.01.2024թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում (ս.թ հունվարի 23-ը ներառյալ) չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՆՌԱՆԷ ԳՈՌ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «ՆՌԱՆԷ ԳՈՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով՝ գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կարեն Մնացականյան

---------- Ալվինա Էլոյան

---------- Ամալյա Քոչարյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/